

ՄԵՍԿ

Տարեկան գին 10 ռուբլ, կէս տարեկան 6 ռուբլ:
Ստանդին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրում են միայն խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք գիտնում են ուղղակի
Тифлис. Редакция «Меск»

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն: Նամակ Ս. Պետերբուրգի:
Պետերբուրգի: Նամակ Ս. Պետերբուրգի:
Պետերբուրգի: Նամակ Ս. Պետերբուրգի:
Պետերբուրգի: Նամակ Ս. Պետերբուրգի:
Պետերբուրգի: Նամակ Ս. Պետերբուրգի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մարտի 20-ին

Մեծ, պ. Իզմիրեանի հաստատած գրականական
մրցանակաբաշխութեան յանձնաժողովի գումար-
բաշխութեան անդի ունեցող Պետերբուրգում անցեալ
յոշնիս ամսին: Մրցանակը այս անգամ բա-
ժանկար յանձնաժողովին ներկայացված աշխա-
տութիւններից երկուսի վրա: Մեծագոյն մասը
(1,000 Քրանկ) ստացաւ Հ. Ղևնդ Ալեքանդրի
(Հելսինկի տեղաբնակիչ պատկերասրտիչ) վերնա-
գրով նոր երկարութեան համար: Իսկ միւս
մասը (500 Քր.) ստացաւ պ. Նորայր իրաւագա-
րին իր Հայկական բառարանութիւնը վերնագրով
գրքոյի համար:

Յաջորդ մրցանակաբաշխութիւնը տեղի կունե-
նայ գալ 1884 թուականի սկզբին. ուստի մրցա-
նակին հետամուտ եղող հեղինակները պէտք է ի-
րենց աշխատութիւնները ներկայացնեն յանձնա-
ժողովին մինչև այդ տարեկան սկիզբը, տեղի տե-
րից: Քաջանայ Պետերբուրգի հասցեով (Петер-
бург. Невск. просп. д. Арм. перекр. կամ St. Petersburg, Newsky, maison de l'église Arménienne):

Մրցանակի պայմանները դարձեալ նոյն են մը-
նում և կայանում են հետեւեալ հինգ կետերով:
ա) Մրցանակին հետամուտ լինել կարող են
ձեռագիր ու տպւած, գրաբար կամ աշխարհաբար
լինքնուրույն շարագրութիւններ հայոց քաղաքա-
կան և եկեղեցական պատմութեան, ազգային հը-
նախօսութեան և օրէնսդրութեան, մայրենի լե-
զուն և գրականութեան վերաբերեալ. նոյնպէս
և թատրոնական գրութիւններ:

բ) Չեն կարող հետամուտ լինել. 1) օտար լե-
զուններով թարգմանված շարագրութիւնները, 2)
դասագրքերը, 3) մրցանակաբաշխութեան ժամա-
նակից երկու տարի առաջ տպւած շարագրու-
թիւնները և 4) արդէն մի անգամ մրցանակ ստացած
աշխատութիւններ յաջորդ տարագրութիւնները:

գ) Թատրոնական գրութիւններից պահանջվում է

որ նրանց բովանդակութիւնը առնված լինի աղ-
բային հին կամ նոր կենսոյից:

դ) Ամբողջ մրցանակի գումարը կազմում է հինգ
հարիւր ռուբլի արծաթ, որ բաժանվում է ամեն
երկու տարին մի անգամ:

ե) Եթէ մրցանակին ներկայացրած գրութիւնների
մէջ գտնվում են մրցանակի արժանի գործեր, նրանք
ըստ իրանց արժանաւորութեան ստանում են
կամ ամբողջ մրցանակը կամ միայն նրա մի
մասը:

Յանձնաժողովը խնդրում է մեր միւս ազգային
լրագիրներից արտատպել ներկայ գեղեցւում ի գի-
տութիւն հասարակութեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է շուտով լինելու է ՄԵՍԿԻ
ՅՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍԱՅ ԳԵՂԱՐՈՒՆԱՄԱԿԱՆ-ԱՐ-
ԴԻՆԱԳՐԾԱԿԱՆ հանդէս: Այդ հանդիսի համար
մեծ պատրաստութիւններ են տեսնվում Մօսկվա-
յում:

ՆՐԻՍՏԱՆԻՑԻՑ մեզ գրում են որ այդտեղ
մեծ քանակութեամբ գործ է ածվում օղին: Նոր-
բայագետներ խմում է օղին, ինչպէս թիֆլիսցիներ
գինի է խմում: Օղին գործածութեան կողմից զը-
րում է մեր թղթակիցը, բայց անհոգի հետ կարող
է մրցել միայն ալեքսանդրապոլցիներ:

ԱՐԴԱՆԻՑ մեզ հաղորդում են հետեւեալ:
«Տեղիս պրիստավը և բոլոր դեռստիկները
մահտաւական են: Սրանց մէջ և տեղիս քրիստո-
նայ ազգայնականութեան մի քանիների մէջ յա-
ճախ կ'ուզենք են պատահում: Այս օրերս էլ դե-
ռիստիկները մինը մի հայի հաւատը հայոյցից
սա վերադարձնում ապառաժ տուեց դեռստիկները:
Թաքած կուլին դատաւիճողը տուեց պրիստավը
որ մի կողմից արձակեց հային, բայց և միւս կող-
մից իր պաշտօնի մէջ թողեց մահտաւական դե-
ռիստիկները»:

Մեզ գրում են Նոր-Բայագետից որ այս օրերս
հայոց երկուսն ուսումնարանի հին հոգաբարձու-
թիւնը տեղի տուեց նորընտրել հոգաբարձու-
թիւնը, որ հաստատվեցաւ իր պաշտօնի մէջ:
Նոյն տեղից մեր թղթակիցը հաղորդում է մեզ
որ վերջին ժամանակներ Նոր-Բայագետի կողմի-
րում տիրում է մի հիւսնադրութիւն, որին զո՞ն
գնում բազմաթիւ մանուկներ:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են թէ այդ քաղաքում

սկի է ինքնիւրան չսա կառապանին հաճողական
ինչ բան պէտք է անել, գոնէ ճաշի հրաւիրում:
Իբրեւ էլ կառապանի ճաշի է հրաւիրել:

Վերջերս Միսիսկա Նահանգաց կառավարու-
թիւնը շատ է զբաղեցնում Նիսիսկայի կործա-
նում սպառնացող վտանգը: Ամերիկայից վերջին
շրջանակին բերած լուրերին նայելով, Ամերիկեան
այս մեծատարած ջրվեժի ժայռը որ ձիւռ պայ-
տի անուն է կրում, որովհետեւ նոյն ձևն ունի,
այս ժայռին մօտաւոր անկումը ընդհանուր հիւ-
սիսային ամերիկացւոց խօսակցութեանց նիւթ է
եղել: Մի տարից ի վեր նկատվում է այս հոյա-
կալ կիսաբարձրական կերպարանափոխութիւնը:
Մինչ ցարդ պարսպին 30 ոտնաչափից աւելի պակ-
սիլը տեսնվում է, և ձիւռ պայռը այժմ եռան-
կիւնի ձևն է ստացել: Հինգ հարիւր հազար բիւր-
կալից աւելի ծանրութիւն ունեցող ահալին ժայ-
ռեր վայր գլորած են, այնպէս որ, Նիսիսկայի
ջրվեժի կենտրոնը փոքր առ փոքր յետ է մղվում
և կարծում են ամենքը որ աշխարհիս այս հոյա-
կերութիւնը որոշեալ ժամանակամիջոցում պիտի
անհետանայ: Սոյն այլափոխութիւնը տալիս են
ջրվեժի բարձրութեանը ընկող ուսուցիչների ծան-
րութեանը և սոսկալի այժմ վայր գահավիժող

մի նոր դրօսարան-այդի պիտի բանան եկեղեցու
հանդէպ: Թղթակիցը այդ առիթով մեծ չնորհա-
կարութիւն է յայտնում գաւառագետին, որի ջան-
քերի շնորհով է բացվելու յիշեալ հրապարակա-
կան այդին: Նոյն թղթակիցը մեզ գրում է որ
շուտով հիմնվելու է Ղուբայում գարեջուր չի-
նելու գործարան և արդէն Բագուից վարկում է
եկել, իսկ Մօսկվայից գալու են բանւորները:

Մեզ գրում են Ղուբայից: «Մեր քաղաքում
նշանակվեցաւ հայտարար դատաւոր պ. Ն. Տէր-
թովմասեանց, որ մեր ամբողջ հասարակութեան
կողմից ընդհանուր յարգանք է վայելում»:

Մեր ԲԱՐՈՒԹԻ թղթակիցը գանգատվում է թէ
մեծ-պար Բագուի մէջ շատ տխուր կերպով ան-
ցաւ: Նա հաղորդում է մի և նոյն ժամանակ թէ
Չատկից յետոյ լինելու են Բագուի մէջ թատրո-
նական մի քանի ներկայացումներ հայերէն լե-
զուով:

Ինչպէս մեզ գրում են, Բագուի մէջ ամեն բան
թանկացաւ, մանաւանդ տները, ընկարանների
վարձը հասաւ անսովոր, առասպելական գներին:

Պ. Ալեքս. Արեւելացի գրում է մեզ Բագուից
հետեւեալ: «Զեք լրագրի թղթակիցը խորհուրդ է
տալիս պ. Արամեանին, պ. Սաֆարեանին և ինձ,
որպէս մասնագետներին, դատաւորութիւններ ա-
նել քաղաքին հայ հասարակութեան համար: Որ-
քան ինձ յայտնի է Բագուի մէջ ուրիշ Արեւելաց
չը կայ, ուրեմն խօսքը իմ մասին է: Բայց հա-
մեստութիւնս ինձ չէ ներում համարել ինձ մաս-
նագետ: Պ. պ. Արամեանց և Սաֆարեան ճշմա-
րիտ մասնագետներ են, մինը բժիշկ, երկրորդը
քիմիկոս, իսկ ես միայն փականագործ եմ, ու-
րեմն մասնագետ, բառի բուն նշանակութեամբ ես
չեմ կարող կոչվել: Այդ պատճառով չեմ էլ կա-
րող հրապարակական դատաւորութիւններ անել
հասարակութեան առջև, բայց կարող եմ իմ կարո-
ղութեանս և ոյժերիս չափ, զրոյցն եր անել ար-
հեստագործների դասի համար»:

Կեռ ես մի քանի պարոններ շարունակում են
գրվել «Մշակին» պահանջելով մեր լրագրի բոլոր
համարները, այս տարեկան առաջին համարներից
սկսած: Հազար անգամ կրկնել ենք որ անհնարին
է մարտ և ապրիլ ամսին գրվողներին ուղարկել
բոլոր համարները յոշնիս ամսից սկսած: Թող
այդ տեսակ պարոնները դրվեն մարտ կամ ապրիլ
ամսից:

Սակալին ներկայ դարը չը վերջացած, Ամերի-

կա-կանական երկերի ջրվեժը ամբողջապէս պի-
տի անհետանայ:

Նիւ-Եօքըն հրատարակված մի տեղեկագիր
ճանուցանում է որ տեղեւոյն այժմեան ուսումնա-
րանայ թիւը 299-ի է հասնում, որոնց թուումն
են նաև զիշրթթիկները, ձեռակերտակները,
վերանորոգեալները և որբերի յատկացեալները:
Կայ նաև ծովային մի վարժատուն Ալեք-Մարի նա-
ւուն մէջ, որ հազարաւոր աշակերտներ նաւարկու-
թեան արհեստը սովորում են: 1881 տարեկան հետ
համեմատելով ներկայ տարեկան ուսումնարանայ
թիւը թէ և նուազ, բայց կրթութեան պայմանները
առաւել ևս գերազանցած են: Մինչդեռ Նիւ-Եօք-
քի բնակչաց թիւը 1881 թիւին 0/0 28 աւելցած
էր, աշակերտաց թիւը անհամեմատ 0/0 35 շատա-
ցած էր: Այս առաւելութիւնը, ասում է Նիւ-Եօք
Հերալտ լրագիրը, անցեալ տարի բնակչաց յաջող
գրութեան և բարեփոխում վիճակի հետեանք էր:
Երբ որ հասարակութեան աղքատ դասակարգը
փող աշխատում է, իսկոյն դաւակը դարձնում է ու-

«Մշակին» մարտի 1-ից մինչև տարեկան վերջը
գրվել յանկարգները պէտք է վճարեն 9 ռուբլ:
Իսկ մեր լրագրին ապրիլի 1-ից մինչև տարեկան
վերջը գրվելու համար պէտք է վճարել 8 ռուբլ:

ՍՈՒՐԱՄԻ երկուսն ծխական հայ ուսումնարա-
նի աշակերտները և աշակերտուհիները, չնորհա-
կարութիւն յայտնելով մեզ, որ մենք նրանց զու-
րոյցին «Մշակին» մի օրինակ ենք ուղարկում, մի
և նոյն ժամանակ յայտնում են յայտնում որ և մեր
միւս խմբակները չեն զբաղւում ուղարկել նոյն
զուրոյցին իրանց հրատարակութիւններին մի մի օ-
րինակ:

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են: «Այժմ մեր
փոստատանից լրագիր ստանալու համար բաժա-
նորդը պէտք է նոյն փոստատանից վերցնի բլիւտ
(տոմսակ), որի համար պէտք է վճարել 1 ռուբլ
50 կոպէկ տարեկան: Չենք հասկանում այդ կար-
գադրութիւնը ինչ օրէնքի վրա է հիմնված: Բացի
ստորանից երբ մենք ստանում ենք հասարակ նա-
մակ, իւրաքանչիւր նամակից բաժանողին պէտք
է տանք 5 կոպ., ապաւոված նամակից 10 կո-
պէկ, նմանապէս և յայտարարութիւնից: Մինչև
անգամ այն մարդը, որ ինքն է գնում փոստատուն
լրագիր համարները ստանալու, նրան ասում են
թէ բլիւտ առէք, այսինքն վճարեցէք 1 ռ. 50
կ., որ իրաւունք ունենալ լրագիր ստանալու»:

Մայրաքաղաքի լրագիրները լսել են որ Ս. Պե-
տերբուրգի համալսարանը դիտաւորութիւն ունի
առաջարկել պ. Ստասիւկիւնին, «Պօրթաբոյ» լը-
րագրի խմբագրին, իրաւաբանութեան պրօֆէսորի
ամբիօնը:

«Моск. Телеграфъ» լրագրում կարդում ենք:
Մենք նորեւում հաղորդեցինք, որ Թիֆլիսում
հրատարակվող «Обзоръ» լրագրի խմբագիրը կա-
ռավարութիւնից թղթաւորութիւն խնդրեց վերջի-
շաւ լրագիրը Պետերբուրգում հրատարակելու
համար: Պ. Նիկոլաւի այդ խնդրը կառավարու-
թիւնից մերժվեցաւ:

Նոյն լրագրին հաղորդում են, որ ըէպիսկոպոս
ուսումնարանի և բի վերանորոգութեան մա-
սին կազմված յանձնաժողովը, որի նախագահն
էր լուսաւորութեան նախկին մինիստր բարօն
Նիկոլայ, որպէս մտցնել այդ ուսումնարանների
մէջ ութ տարեկան ուսման ընթացք, երկու չորսնի
վրա բաժանելով, իւրաքանչիւր չորսնի մէջ չորս
տարի: Առաջին չորսնում դաս կը տրվեն հանրա-

դարկում: Սակաւ ունեւոր քաղաքացւոյն փախալը,
իր գաւակը կրթելով Վանտիլիւթի, Ուալիւթո-
նի, Լիւնիւթի, Գարֆիլի շաղկին հետեւցնել է,
նմանապէս քաղաքացին համոզած և հաւատա-
ցած է որ հանրապետութեան մէջ ամենազը-
խաւոր ազգային պաշտօնները ամենատար ծը-
նունդների կը պատկանին, որոնք մտաւորական
գորութեամբ վնասալ, հանապազ յաղթող հանդի-
սանալու պատրաստուած դիւցազներ, և ընդհա-
նուր յատաշարիւթեան և լուսաւորութեան զօ-
րեղ և զրգուիչ գործիչներ կը լինեն:

Անգլիացի ճանապարհորդ մը հասարակաց պան-
դոկի մէջ մի քանի օր բնակելու համար մի սե-
նեակ է վարձել: Պանդոկին ծառաները կանչելու
համար որոշուած զանգակը այնքան յաճախ լը-
վում է եղել, որ խեղճ ծառայիկը, հրամանները
կատարելու համար սանդուղիկով ստեղ բարձրա-
նալով և իջնալով ձանձրացել և շատերը պանդո-
կից հեռացել են: Վերջապէս, պանդոկապետին էլ
համբերութիւնը հասնելով, եկել անգլիացուն ա-
սել է թէ իր պանդոկից կ'ենէ, ուրիշ տեղ գնայ:
Անգլիացին, այս առաւելութեան պատճառը ի-
մանալուց յետոյ խոստացել է որ այնուհետ քը-

Հայրենասէր մարդիկ, կարող են շատ ողորմած գտնուիլ Հայ պանդխտներին, առնելով նոցանից ամենաքիչ տոկոս նոցա վերցրած դրամական փոխառութեանց համար: Բայց վաղը նոյն ընկերութեան մէջ ներս պրծնելով շատ «ազգասէր» հայր պատուիրակներու հետեւելով իրանց հաճոյքին, ճշտեալական Միութիւնը կը դարձնեն ոչ բարեգործական և ազգային հաստատութիւն, այլ «պրկողական և յափշտակողական մի համերաշխ» ընկերութիւն: Փառք Աստուծոյ, օրինակները քիչ չեն մեր աչքի առաջ, թէպէտ այդպիսի «համերաշխ» ընկերութիւններ օրը տասն անգամ էլ արժանի դատվին մի քանի «պատուական» և «ազգային» լրագիրների մէջ «ազգի ապագայ տարեգրութեանց մէջ ոսկեայ անմահ տառերով արձանագրվելուն»: Հարկէ այդ «անմահ արձանագրութեան» արժանաւորը գաղտնիքը շատ ակնկալ է, մանաւանդ արձանագրող «պատուականներ» համար: Այսպիսի տխուր հետեւութիւններ ի նկատի առնելով, ճշտեալական Միութիւնը և Քննիչ յանձնախումբը պիտի աշխատեն, կարողացածին չափ, զերծ պահել իր հիմնիկ գործը ամենայն անուանարկիչ և վնասարեւ պատահանքերից:

6. Միութեան կանոնադրի մէջ զոնէ սոսկ սկզբունքի և արտաքին արժանապատուութեան համար, պէտք է մտցնել խօսքեր թէ «Միութեան կարող են մասնակցել բոլոր հայեր ԱՌԱՅԻՅ ԿՐՈՆԻ ԽՅՐՈՒԹԵԱՆ: Թէպէտ «հայ» ասելով, շատ քիչ «լուսամտներ» կարող են կրօնի ու և է տարբերութիւն որդեկ բայց այսու ամենայնիւ բնաւ աւելորդ չենք համարում պնդել, որ յիշեալ օրէք բառերը ներմուծվին կանոնադրութեան մէջ, որը բացի աւելորդ պատուից ոչինչ չէ կարող բերել:

Առ այժմ միայն այսպիսի հարկաւոր համարելով յայտնել ճշտեալական Միութեան քննիչ յանձնախումբին, մի և նոյն ժամանակ պարտաւորութիւն եմ համարում գաւառահայոց առանձին ուղարկութիւնը և կարծիքը խնդրել վերջիցեայ դիտողութիւնների վրա, որոնց թոյլ կողմերը իմանալ շատ հեռաքրքիր կը լինէր ինձ, յիշեալ ազգայինների զգացած պէտքերը աւելի ճիշդ կիրառով ըմբռնելու համար: Իսկ գայով նոյն իսկ Յանձնախումբին, անտարակոյս ենք որ նա ամենից աւելի լաւ կը հասկանայ, որ իր կարողացած հրապարակային հրաւերը արամբարեւն պարտաւոր է կայացնելու իրան նոյնպէս հրապարակային կիրպով արձագանդ տալ այն ամեն դիտողութիւններին, որ նա ստանում է իր ստանձնած գործի վերաբերմամբ. . . իսկ հակառակ դէպքում բոլոր պատասխանատուութիւնը կը մնայ ի հարկէ իրան յիշեալ յանձնախումբի վրա:

ԳԵՐՄԱՆԻԱ

Երկրինց մարտի 29-ից հաղորդում են «Polit. Corresp.» լրագրին հետեւեալը: Վերջին ժամանակներում նորից սկսեցին հաւատացնել, որ պրուսական կառավարութեան յանձնարարութեան համեմատ Շէյնցերից կատարվող բանակցութիւնները պապական կառավարութեան հետ ոչինչ հետեւեցներ չունեցան և չեն էլ ունենալու ապագայում: Այդպիսի ենթադրութիւններ յայտնվում են ամեն անգամ, երբ որ և է յանձնարարութեան կատարողները ստիպում են հետաքրքիր հասարակութեանը երկար ժամանակ սպասել: Բայց դրանից չէ կարելի եզրակացնել, որ այդ ենթադրութիւնները իրաւացի են: Հեռագիրը հաղորդեց,

որ իբր թէ պապը Շէյնցերին հետեւեալ յայտնութիւնն է արել. «Եթէ գործը ինձանից կախում ունենար, Պրուսիայի հետ խաղաղութիւնը վաղուց կ'ապագա կը լինէր»: Գրանից յետոյ սկսեցին այդ խօսքերին ամեն տեսակ մեկնութիւններ տալ: Այսպէս թէ այնպէս կարելի է հաստատասել, որ այդ բանակցութիւնները մեծ պատասխանատուութիւն են դնում ինչպէս պապի, նոյնպէս և զերմանական պետական կանցլերի վրա և այդ պատճառով բանակցութիւնները դանդաղ և զգուշութեամբ են կատարվում: Այնպիսի է խաղաղ այնպիսի արշաւանքի պտուղների հետ, ինչպէս կուլտուրական կռիւն էր, չիմանալով թէ ինչպիսիք են ինչ կը ստացվի: Պապականութեան դեմ միջին դարերում կատարված կռիւց յետոյ, ամբողջ աշխարհը պետութեան և եկեղեցու մաքսանման վրա այդպիսի հետաքրքրութեամբ չէ նայել, ինչպէս նա նայում էր կուլտուրական կռիւն: Ուրքան էլ դանդաղութեամբ առաջանան այդ բանակցութիւնները և որքան էլ դժուարութիւնների հանդիպեն, այսու ամենայնիւ չէ կարելի ասել, որ նրանք դրական հետեւեցներ չեն ունենայ: Երկու կողմերն էլ աշխատում են չը սկսվել, բայց երկու կողմերն էլ խոստովանում են, որ ամենամեծ սխալը այն կը լինի, որ սխալվելու երկիւղից հարցը անվճիւր չը թողնեն: Իշխան Բիսմարկ այժմ այնպիսի հոգսեր ունի, որոնք աւելի մեծ նշանակութիւն ունեն, քան թէ պապական կառավարութեան հետ ունեցած վեճերը: Բայց նա այն մարդկերանցից չէ, որոնք հոգսերի շատութեան պատճառով թողնում են կռիւ գաշտը և պատրաստ են իրանց յաղթված յայտնել: Նա յոյս ունի իր խելքի և կամքի ոյժի վրա և զիտէ, որ, եթէ պապական կառավարութիւնը նրան կը ստիպէ, նա կուլտուրական կռիւը աւելի դրական միջոցներով կը կատարէ: Պապական կառավարութիւնը անկարող է չը հասկանալ, որ նա շատ բան վտանգի կենթարկէ, եթէ կը ստիպէ Գերմանիային վերանորոգել կուլտուրական կռիւը: Այդ պատճառով հասկացող մարդիկ այն կարծիքն են, որ բանակցութիւնները համաձայնութեամբ կը վերջանան:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍԻՅԱՅ

Կ. Պոլսի, 18 մարտի

Յոյն և հայ ունկնդիրներու բազմութիւն մը կը գլխի ամառոյ 12-ի գիշերը յաւաք Միջօրեայ Բերայի սրահ: Տիկին Սրբուհի Տիւսար պիտի ծանօթացներ օտարականաց մեր մտաւոր զարգացումը: Եւրօպացի կը կարծեն թէ յոյնն է Թուրքիոյ ամենին աւելի յառաջացած տարրը և կառողք արեւելքի մէջ քաղաքակրթութիւն տարածելու: Հետաքրքիր էինք լսել թէ ինչպիսի ճարտարութեամբ հայ դասախօսը պիտի պարզէր յոյն արհաւիր մէջ մեր ընդունակութեան չափը և դարբացման վիճակը: Կենթադրելով թէ պիտի ստիպվէր զուգակիւ մը ընել երկու սղագր ժամանակակից յառաջադիմութեանը:

Տիկին Տիւսարի դասախօսութիւնը չը համապատասխանէր մեր մտքի մէջ պատրաստված ծրագրին: Տիկին դասախօսը գրած էր լաւ ֆրանսերէն մը, մասնագրական ոճը բնական աղէկ, յստակ կարտաբանէր. կրնայինք երկար մտիկ ընել: Երեք քառորդ ժամ միայն խօսեցաւ. չը կրցնէր բացատրել ինչու այսքան հապճեպ: Համառօտ յիշատակից անցնելով, անխաղճը ստեղծ ներկային, հարեանցիկ անցաւ կարեւոր կէտերու վրայ: Իսկ աւելորդ չէր սեպած պնդազարգել դասախօսութիւնը ընդհանուր խորհրդածութիւններով յառաջադիմութեան և լուսաւորութեան վերաբերեալ: Միւրթաբանց յիշատակն ընկելով չենք դիտար ինչ հարկ տեսաւ քիչ ներդրամք ըլլալ աւանդ կրօնական համոզանքը: Եթէ անկողմնակալութեան համար էր, այն աստի պէտք էր այս-

պէս վարուիլ ամեն ակումբներու և անհատներու համար ալ, լաւ ու վատ գաղափար կողմերը միասին դուրս ցատկեցնելով:

Ջարմազանը նաև թէ Կ. Պոլսոյ, Խլմիրի, Տրիխիսի հետ էր Հայաստանն ալ չարժանացաւ յիշատակութեան մը: Միթէ Խրիմեան կը նսեմանայ Ներսէսի ու Պէշիկիշլեանի մօտ: Միթէ Սրբանձտեանի երկիրը նուազ արժանի են ուղարկութեան քան չեմ գիտեր որ պոստիւլայ հնազանդական խոյրերն: Միթէ Տէր Սարգսնիցի Շահնը Խլմիրի թարգմանութեանց չափ արժէք չունի մեր գրականութեան համար: Բայց այն աստի հարկ պիտի ըլլաւ յիշատակել Հայաստանի անուր: Կրնաք հաւատալ թէ հայ դասախօսը զգուշացաւ յիշել մի անգամ իսկ Հայաստան անունը, մեր ժամանակակից պատմութեան վերաբերեալ մատերուն մէջ: Երբ խօսեցաւ ընկերութեանց վրայ բնաւ, նպատակ ունի փոքր-Ասիոյ մէջ կրթութիւն ծառայել: Թէպէտ ընկերութիւնը չեն վախար գրծմը իրենց հրատարակութեանց ձևատար «Հայաստան և Կիլիկիա» բառերը:

Գասախօսութիւնը վերջանալուն յոյն բարեկամ մը ծիծաղելով ինձի կըսէր խօսակցութեան միջոցին. «Եւ սակայն ունենալու էք դաք հայրենիք մը որ ոչ Տիֆլիսն է, ոչ Կ. Պոլսը, և ոչ Խլմիրը»: Գաղափարիտութիւնը կը պահանջէ այս եղանակաւ խօսիլ, ըսի և շուտ հեռացայ: Գիտէի թէ որչափ անհիմն էր փաստս հայն օտարին առաջ արդարացնելու համար: Ինքնին կըսէի, և ո՞վ պիտի փրկէ զմեզ քաղաքակրթութիւնէ: Գաղափարէս է հայ պատանին որ կըր կը համարձակի անտեսադիտական ծանր հարցերով դրաղիլ լրագրաց մէջ հարկ կը տեսնէ, մինչ ամենին հարկ մը չը կայ «մեր բարեխնամ կառավարութիւնը» տեղ մը զետեղել: Գաղափարացեալ է խմբավորը որ փրկանապատան մը ստեղծելու եղբ է: Գաղափարացեալ է զեղեցիկ սեռը որ օտարին կուզէ ծանօթացնել հայերը և մոռցողութեան կը դատապարտէ անոնց հայրենիքը: Գաղափարիտութիւնը հայոց այդեցեցը (Փիլոսոֆիա) եղբ է: Հայակալ

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍԻՅԱՅ

Կ. Պոլսի, 31 մարտի

Ուղարկութիւն հրաւիրեցաւ Կ. Պոլսոյ «Մասիս» լրագրին 3140 թիւին մէջ հրատարակված մի նամակի վրայ, որ քաղաքում է ձեր թիւը: Եւ տեսնուի թէ մէկը Ուրմիայէն գրած է ձեզ նկատմամբ այն յօդուածոց դուրս կը աստի գրկած եմ ատորբէն լրագրին» որ կը հրատարակվի յԱրմիստ:

Կը փութեմ ծանուցանել ձեզ, տէր, թէ ձեր Ուրմիայի նամակակիրը բոլորովին սխալ հասկըցած է թղթակցութեանց ողբն, և այնպէս այլապէս է լեզուս որ բերանս գրած է բաներ դուրս ոչ երբեք գրած եմ, և ոչ իսկ մտքէս անցուցած եմ:

Ինչ որ գրած եմ Թուրքիոյ հայոց հարստահարութեանց վրայ, գրած եմ ճշմարիտ համակրութեամբ առ հայոց թղթակցութեանց մէջ չը կայ ոչ մի անհարկութիւն նկատմամբ սա կէտին թէ հայը կընդունին կամ չեն ընդունին բողոքականաց պիղքերը: Գիշերելու նկատմամբ սա դիտողութիւնը միայն ըրած եմ որ Թուրքիոյ կառավարութիւնը թոյլ չը տար հայոց գործածել իրենց պիղքներուն մէջ որ և իցէ զիբը որ կը խօսի Հայաստանի վրայ, իբրեւ մի առանձին նահանգ կամ երկիր:

Ամերիկացի մը չը կրնար այնպէս մոռնալ իր ազգին պատմութիւնը, որ Է սրտէ համակիր չըլլայ որ և իցէ ժողովրդեան որ կը մնայ բերել ի ձեռս միջոցներ աւելի առաջադիմութեան և ճշմարիտ զարգացման: Եւ ո՞վ որ արեկ ծանցած է Ամերիկայի ժողովուրդը, գիտէ թէ կրօնական հաւատոյ տարբերութիւնը չընէր զմարդ նուազ ազգասէր, և նուազ ճշմարիտ հայրենասէր:

Ինչիմով Լապարի

ԱՐՄԵՐԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Соврем. Извѣстія» լրագիրը խորհուրդ է տալիս Ռուսաստանին դրաւել զօրքերով Թիւրքաց Հայաստանը, Թիւրքիային ստիպելու համար պատերազմական ծախսերը վճարելու:

— Ընդունում լուր է տարածվել որ Ֆինլանդիայի ղեկավարութիւնն ունենէ ձայնեցնել Տէմիւ գետի առին անցնող տունելը: Այդ մասին ընտելութիւն է նշանակված:

— Վիեննայի «Polit. Corresp.» լրագրին Սօֆիայի հաղորդում են հետեւեալը: Ռուսաց ընդհանուր հիւպատոս պ. Խիլաքովո յայտնեց ռուս զաղթականութեան ներկայութեամբ սը ռուսաց կառավարութեան հաճելի չէ որ Թագաւոր Կայսրի հպատակները մասնակցէին Բօսնիայի և Հերցեգովինայի ապստամբութեան գործի մէջ, կամ նոյն իսկ աշխատէին խօսքով անգամ քաջալերել ապստամբներին:

— Լրագիրները հաղորդում են, որ մարտի 27-ին, Կ. Պոլսում դուրս եկաւ անգլիական և ֆրանսիական լեզուներով հրատարակվող «Levant Herald» լրագրի վերջին համարը հետեւեալ նկատողութեամբ: «Levant Herald» լրագիրը զաղարկեցած է և պատճառները աւելորդ ենք համարում բացատրել:

— «National Zeitung» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ «Levant Herald» լրագրի դադարումը այնտեղ մեծ տարաւորութիւն է դրծել:

— Կ. Պոլսից, մարտի 24-ից լրագիրներին հաղորդում են, որ աւստրո-ունգարական դեսպան, բարոն Կալիցէ, հրաւիրվեցաւ սուլթանի մօտ և մէկ ժամի չափ տեսակցութիւն ունէր նրա հետ:

— Պրանսիական նոր դեսպան Ժօրէս ճանապարհ կընկնի դէպի Պետերբուրգ, հենց որ ռուսաց դեսպան պ. Օրլով փարիզ կը վերադառնայ:

— «Voltaire» լրագիրը հաստատում է, որ Գաւթեւտա ղեկավարութիւնն չունի գաւառները ճանապարհորդել, ընդհանրապէս, ինչպէս լրագիրները հաղորդում են, դիտարկութիւն ունի առ ժամանակ քաղաքական գործերից հեռանալ և արտասահման գնալ, երեկ Անգլիա:

— Դուրքիսում, մարտի 28-ին, մէկ հասարակաց տան մէջ տարձանակից սպանվեցաւ Ջօզեֆ Մալի-Մաճոն անունով մէկ բանուր: Ենթադրում են, որ սպանվողը պատկանում է զաղարկ ընկերութիւններից մէկին և որ սպանութիւնը քաղաքական նպատակ ունէր:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնի հարուստ ամերիկացի Մակէ, որը համարվում է ամենահարուստ մարդը աշխարհիս երկսին, իր խորթ ազգիկը նշանադրեց զօն-Ֆիլիպ-Լուիս-դէ Բուրբոնի հետ: Գօն-Ֆիլիպ 35 տարեկան է: Նա բրազիլական գօրծի օֆիցեր է, բայց իր բնոււ, զօն-Պեդրօ Կայսրի կառավարութեան համաձայնութեամբ, մշտապէս ապրում է Եւրօպայում: Նա Բուրբոնների նեապոլիտանեան գծի սերունդն է, և բացի Բուրբոնեան ցեղական անունան, բրազիլական իշխանի տիտղոսն էլ է կրում: Նա հարուստ չէ, բայց շատ համակրելի և կրթված մարդ է համարվում: Մեծ մասամբ նա ֆարիզում է բնակվում: Այդպիսով ամենամար «միլիոնների սերունդը» կը շարկապվի եւրօպական ամենահին թագաւորական տոհմի հետ:

Բ ժ ի չ կ ն ե թ ի թ ի լ է ը ա շ ի ա ր ճ ի ս ե ի և ս ի ն : Փարիզի բժշկական ֆակուլտետը, բոլոր երկրների ստատիստիկական գրասենականների օգնութեամբ, գտաւ կրթված աշխարհում գործող բոլոր բժիշկների թիւը: Այդ թիւը 182,000 է: Ազգայնականութեան թիւ համեմատ, Պրանսիան ամեն երկրներից աւելի բժիշկներ ունի, այն է 26,000: Ոչ մէկ երկրի մէջ բժիշկները այնքան քաղաքականութեամբ չեն պարսպաւոր, որքան Պրանսիայում: Միայն պատգամաւորների ժողովի 547 անդամներից 44-ը բժիշկներ են: Ահաւորում և կառավարչական զանազան ժողովներում մասնակցում են 6,700 բժիշկներ: 182,000 ընդհանուր թիւից, 12,000 բժիշկներ են հաւուս, որոնք հրատարակել են իրանց հեղինակութիւնները կամ պրօֆեսորի պաշտօն են կատարում: Պրանսիայից յետոյ երկրորդ տեղը բռնում է Անգլիան:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՍԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 ապրիլ: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, մուրհակների թղթերը նոր գնելի, կը սկսվեն գործադրվել յուլիսի 21-ից: Սենատի նախկին օրեր-պրօկուրօր Տուրին յանձնված է մշակել առեւտրական նոր կանոնադրութեան նախագիծը և կանոններ անանկութեան մասին:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԴՈՐ ԱՐՄԵՐԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՐԱԲԱ շաքարի ձուաներ, պանիր-չեստեր, խաւիար և այլն: Ծախվում են շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ

ՄԵՋ
Նոյն տեղ ծախվում են. բազմաթիւ մահճակալ 8 ռ., ամբողջ **ՀԱԳՈՒՍՏ** 12 ռ., չը թրջող վերարկուներ 6—18 ռ. և մեծ քանակութեամբ **ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ**, դանակներ և այլն: 3—10

ՎԻԵՆԱՅԻ ԱԹՈՒՆԵՐ

36 ԲՈՒՐԼ

Եփ. Ծառուբեանցի գէպոյում 10—20

Բ Ա Ք Ո Ւ Մ

ԱՋՆԱՌԻՐՈՎԻ Բաթումի գործարանից նոր բերված է մեծ քանակութեամբ ամենալավ **ԾԽԱՌՈՏ** և **ՊԱՊԻՐՈՍՆԵՐ**: Ծախվում է Միքայէլեան կամուրջի վրա **Ծ Խ Ա Ռ Ո Տ Ի Դ Ե Պ Ո Ւ Մ** և Գօլովնսկի փողոցի վրա **ԲԱՄԱՋՈՎԻ** խանութում: Ցանկացողները ըստանալ մեծ քանակութեամբ կարող են պատուիրել նոյն տեղը Միքայէլ Մերուքումբովին:

3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԲԱՅՅԻԻ

Դ Ա Ւ Ի Թ Բ Է Կ Ի

III ԳԻՐԲԸ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆԸ Է 2 ԲՈՒՐԼ

Վէպի այս հատորի մեկամիայնութեամբ պատկանում է բացառապէս թիֆլիսի **ԵՎԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻՆ**: Օտարաբաղադրացիք կարող են զիմել այս հասցեով.

«ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ» (на Головинскомъ проспектъ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

5—10

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած **ՖԱԲՐԻԿԱՑՈՒՄ** լաւ **ԾԽԱՌՈՏԻ** սերողները և գործածողները կը դանեն:

ԸՆՏԻՐ ԾԽԱՌՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր թիւրքաց, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի: Եւ երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ծաշակին: Ծխախոտի զինը, փունտը 3 ռուբլուց մինչև 10 ռուբլ, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 ռուբլուց, մինչև 3 ռուբլ:

Գործարանս գտնվում է 3-րդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գալլէրէում, Գօլովնսկի փողոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում:

Գործարանատէր **ՇԱՀԻՆՅԱՆՑ**

16—25

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ, Գօլովնսկի պրոսպեկտի վրա, առև ճարտարապետ Բէյօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը: Կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներէրից:

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԻՆՁԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 Կ. զիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 Կ. հարկը, սապօն 3 Կ. հատը, արեւի ժԱՄԱՑՈՑՆԵՐ 50 Կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկոյ) ժամացոյցի համար 50 Կ., կրաններ 10 Կ., ջրի ամաններ 30 Կ., կժեր 25 Կ., կախարաններ 4 Կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 Ր., ՏԵՐՃԻՆԵՐ 1 Ր., հայելիներ 35 Կ., վարակներ 4 Ր., պիջակներ 6 Ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 Ր., զկարկիներ 1 Ր., չը թրջող վերարկուներ 6 Ր., շէշտակա 90 Կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 Կ., կանանց և տղամարդկանց **ԳՈՒՐԱՆԵՐ** 2 Ր. 50 Կ. զիւժինը, **ՄԵՂԱՄՈՍ** 32 Կ. անգլիական ֆունտը, կանգնաներ 40 Կ. ֆունտը, ԳՐԱՊ, արիկօ, ԱԼԲՈՍՆԵՐ, բրիտանական մետաղի առարկաներ և այլն **ԿԻՍԱԳՆՈՎ**, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՅԻ:

8—50

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԵՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՆԾԱՑՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արժույթ. Գալլէրէում. № 144 ԾԱՎԱԼՈՒՄ Ե արժան գնելով

Տօնէս ֆաբրիկայի ամեն տեսակ ՄԵՐՈՍԻ, նոյնպէս խաւիարի և վերարկու:

12—60

ՀԱՅԱՍՏԱՆԵՐԸ և ՇՐՋԱԿՆԵՐԸ:

Ա. Ս. ԾՈՒՐԻՆՈՎԻ և ընկերութեան գեղական պահեստը պատիւ ունի յայտնել, որ այսուհետեւ առևտուրը կը կատարվի հետևեալ ֆիրմայով. **ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵԻՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ** («КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО ТРГОВЛИ АПТЕКАРСКИМИ ТОВАРАМИ»), որի կանոնադրութիւնը ԲԱՐՁՐԱԳՈՑՆ հաստատված է ներկայ 1882 թ. յունիսի 29-ին: Ընկերութեան պահեստը գտնվում է Խրաարովի տանը, Թանգարանի դէմ: 7—7 (եր. և ուր.)

ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅՆ

Հայոց վրաստանի և իմերէթի ծանուցանէ, թէ նրա պատնումը նշանակած է ամուրգ 5-ին ապրիլի ներկայ տարւոյ և կրկնաձուրգ 6-ին նոյն ամսի, կապալաւ տալու եկեղեցական գիւղերը, որոնք գտնվում են Ախալքալաքի գաւառում թիֆլիսի նահանգի: Պայմանները ցանկացողը կարող են տեսնել կոնստանտնուպոլիսի գիւմաստանը ամեն օր, բացի տօներէրից, առաւօտեան 9-ից մինչև 2 ժամ:

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Պարսկական պալատական արտիստ

ԲՈՒՐԵՐՏ ԼԵՆՑ

պատիւ կունենայ Ձատկից յետոյ **ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹԸ** ըսկալած մարտի 28-ից մինչև ապրիլի 4-ը տալ ամենայն օր **ԿԱԽԱՐԱԿԱՆ** և **ՖԻԳՐԵԿԱԿԱՆ** մեծ ներկայացումներ բոլորովին **ՆՈՐ ՊՐՕԳՐԱՄՈՎ:** Պ. ԲՈՒՐԵՐՏ ԼԵՆՑ, վերջին



երկու շաբաթների ընթացքում ներկայացումներ չը տալով, նոր ՍՏԱՅՎԱՍԻ փքանի ԳՈՐԾԻՔՆԵՐԻ օշնութեամբ պատրաստեց ԲՍՋՄԱԹԻ ՆՈՐ ՓՈՐՁԵՐ, որոնք Ուսաստանի մէջ ոչոքից չեն ցոյց տուած և որոնք ներկայումս ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՄԵՍ ԱՋՂՈՒԹԻՒՆ ունեն:

Ներկայացման սկիզբն է երեկոյեան 8 ժամին:

Ներկայացման սկզբին և անտարկտների ժամանակ կածէ զինուորական ԵՐԱՇՏՈՒԹԻՒՆԸ պ. Պարսէկի առաջնորդութեամբ: **ՏՈՄԱՍԱՆԵՐԸ** և մանրամասն պրոգրամները կարելի է ստանալ **ԹԱՏՐՈՆԻ ԿԱՍՍԱՑՈՒՄ** ամենայն օր առաւօտեան 10 ժամից: Ներկայացման վերջը կը տրվի **ՍՊԱՆԻԱԿԱՆ ԻՆԿՎԻԶԻՏԻԱՅԻ ԴԱՏԱՐԱՆԸ**, կամ պատժի յանկարծակի փոփոխում: Այդ փորձը կը կատարվի թիֆլիսում դեռ չը տեսնված գործիքի միջոցով, որ անուանվում է **ԻՆԿՎԻԶԻՏԻԱԿԱՆ ԶՈՒԹԱԿ** կամ **ՍՊԱՆԻԱԿԱՆ ԿԱԽԱԿԱՆ:**

2—2

Մ Ի Ջ Ի փողոց, Կ ա թ Օ լ ի չ է ս կ ա յ ա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. **ՎԻԵՆԱՅԻ ՄԵՐԵԼ** ամենայն տեսակ, ֆրանսական և անգլիական երկաթէ կրակաւորներ 8—30 Ր., չամաղաններ 250—25 Ր., սակօյաժներ 1. 30—12 Ր., ս ու Ն դ ու լ ի ն եր ձ ա նապարհի 6—35 Ր., մարաններ (погребы) 6—25 Ր., ս ա մ օ վ ա Ր ն եր 60 Կ.—1.25 ֆունտը, կուսանի պինձէ ամաններ, Գեղմանիայի երկաթէ էմալով ամաններ. ու մ ի վ ա լ ի ի կ ն եր մ ր ա մ օ Ր ն ի 38 Ր.—75 Ր., հրացանների երկու լույանի 6—32 Ր., ու լ Վ լ լ լ է Ր ն եր ա մ Ն ա յ Ն տ ե ս ա կ 3. 50—30 Ր., պատրաններ (գուլաններ) լէվոլլերի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից, պապիրոս և թամբալու կուշնարովի գիւղի պապիրոսի. 5,000 ֆունտ ԹէՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բրնձկաւ. (սուխար չայու և կաֆէ) Լինէմի. կօֆէ Լինէմի և Միլէյսոնի. Պետերբուրգու 40—1 Ր. 25 Կ. հայելիներ ամենայն տեսակ 28 Կ.—240 Ր., պրոբկայ գինեկաճանների, հանքային և զարեջրի (ДЛЯ ЗЕЛЕТЕРСКИХЪ ВОДЪ И ПИВА) դուլլուկ (пучк) պաղեսներ սամուկարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 Ր. 20 Կ.—25 Ր. գուժինը, զրչակոթներ 1 Ր. 80 Կ.—5—60 Կ. դանակ ջիբի 1—60 Կ.—12 Ր., դանակ հայի 20 Կ.—1 Ր., հատը, կուլոններ 1—40 մինչև 3—20 Կ. պրիբոր, միս կտրելու մաշինայ. Անգլիական ութոններ, բրիտանակի չայիլիներ, կաֆէ-նիլիներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրամալ կարթիկէն 18 Կ., վաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փաշտի, կանվերտներ, սուրբուչ, մատիտ, զրիչ երկաթէ, զրչակոթ, քարեախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպայիներ, զգալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչակի և բրիտանակի դուժինը 1—50 Կ. մինչև 12 Ր., և չայու 45 Կ.—5 Ր., չու-միչէլէք 45 Կ.—5 Ր., շամուդաններ ամեն տեսակ 25 Կ.—12 Ր. ջուլետ, պոլ-սապոշկաններ վարչակու, ՌԵՋԻՆԻ ԿԱՂՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլլաններ կանանց և մարդկերանց 15 Կ.—50 Կ. ջուլետ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զանախներ 35 Կ.—4—50 Կ., հատ, անձրեկ և շոքի. սանդրեր շիր-մայու ոսկորէ, գուտապրիչովի և փայտէ, շշտակներ գլխի, շոքի, սապոկի, պոլի և կարտի համար, չուլլի թէլ (бумага) մատակի կօժի և շալէ (парусь) ֆէլ-չատիկէք մարդկերանց և կանանց, պրոմաններ, քիսաններ, պապիրոսի ամաններ և մանր գոյաներիչիի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ., կտոր, հոտալէտ ջրեր, պուրա, Գիլցերին ջրի քացալի, հոտալէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցնելալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են **ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ** պահեստում: (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաբաղադրացիք կարող են զիմել հետեւեալ հասցեով. **Тифлисѣ Михаилу Н. Теръ-Никогосову.**

22—180

Մ Ի Ջ Ի փողոց, Կ ա թ Օ լ ի չ է ս կ ա յ ա փողոցի անկիւն № 13.